1. Դարձերեսի դետալ պղնձե թիթեղիկներով (47)

2

Ք.Յ. 37 թ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Յակոբ Յարութիւնեան

Ք.ա. I դարի վերջերին Արեւելքում եւ Մեծ Հայքում տեղի ունեցած բուռն իրադարձութիւններից յետոյ, այն է՝ Լուկուլլոսի, Պոմպէոսի, Կրասոսի եւ Անտոնիոսի արշաւանքներից յետոյ, հաստատուեց յարաբերական անդորը: Կողմերը, կարծես թէ, ուժ էին հաւաքում, վերալիցքաւորւում՝ կրկին իրենց փոխյարաբերութիւնները բացայայտելու համար: Դա պայմանաւորուած էր ոչ միայն Հռոմի կողմից չափից աւելի մեծ ուժեր վատնելով, որը համարեա թէ նրան ոչինչ չտուեց, մասնաւորապէս՝ Հայաստանում իր գերիշխանութիւնն հաստատելու առումով, այլեւ բուն Հռոմի ներսում տեղի ունեցած արմատական փոփոխութիւններով եւ նրա վերակառուցմամբ: Եթէ մինչ այդ Հռոմի՝ Արեւելք ներթափանցելու առաջին օրերից՝ Ք.ա. 190 թ. սկսած, նրա ազդեցութիւնն այստեղ աճում էր երկրաչափական պրոգրեսիայով, ապա Միհրդատեան պատերազմների ժամանակահատուածից սկսած հանրապետութիւնը հարկադրուած էր, իհարկէ, իր կամքից եւ ցանկութիւնից անկախ, վարել աւելի հաւասարակշռուած քաղաքականութիւն: Հռոմէացիները հասկացան եւ զգացին, որ արեւելեան ժողովուրդների հանդէպ պէտք է լինել առաւել ճկուն ոչ միայն պատերազմի դաշտում, այլեւ դիւանագիտութեան ասպարէզում: Այս ճեղքուածքներն առաջին անգամ իրենց գոյութեան մասին զգացնել տուեցին դեռ Լուկուլլոսի արշաւանքի օրերին, որը եւ դաս հանդիսացաւ արդէն նրան անմիջապէս յաջորդած Գնէոս Պոմպէոսի համար: Նա արեւելեան հարցերը կարգաւորելիս ցուցաբերեց նուրբ դիւանագիտութիւն, որն առաջին հերթին դրսեւորուեց Հայաստանի եւ Պարթեւստանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու ընթացքում: Նա չդիմեց լուկուլլոսեան բիրտ միջոցներին եւ, յատկապէս Տիգրանի հետ միջպետական հարցերը կարգաւորելիս՝ դիմեց նոյնիսկ տարածքային «նուիրատուութիւնների» քաղաքականութեան կենսագործմանը: Նա Տիգրանին տուեց Ծորոխի աւազանի հարաւային շրջանները՝ ցանկանալով ձեռք բերել նրա վստահութիւնը, բայց այս ամէնը երկար չտեւեց: Պոմպէոսին յաջորդած Կրասոսն ու Անտոնիոսը կրկին վերադարձ կատարեցին լուկուլլոսեան հին մեթոդներին, ուստի պայքարը բորբոքուեց նոր ուժով, եւ սա յուշում էր, որ Հռոմը ապրում է ոչ միայն արտաքին, այլեւ ներքին գաղափարական ճգնաժամ: Անյայտ է, թէ ինչով կը վերջանար այս ամէնը, եթէ Հռոմում տեղի չունենար պետական յեղաշրջում, եւ իշխանութեան ղեկին չյայտնուէր այնպիսի մի նշանաւոր պետական գործիչ, ինչպիսին Օկտաւիանոս-Օգոստոսն էր (Ք.ա. 27 - Ք.յ. 14 թթ.):

Նորաստեղծ Հռոմէական կայսրութեան հիմնադիր Օգոստոսը երկրի արտաքին քաղաքականութեան հիմնական սկզբունք հռչակեց pax Roman-ան, որի ամենակարեւոր տարրերից էր հանդիսանում՝ յարաբերութիւնների կարգաւորումը արեւելեան երկրների եւ պետութիւնների հետ:[1] Օգոստոս կայսեր որդեգրած քաղա-

1 Այս կապակցութեամբ աւելի մանրամասն տե՛ս **Н. А. Машкин,** *Принципат Августа,* М. Л. 1949, passim; **М. И. Ростовцев,** *Рождение Римской империи,* М. 2003, էջ 9-29, 115-133; **А. Б. Егоров,** *Рим на грани эпох,* Л. 1985, էջ 25-37, 88-102; **Дж. Бейкер,** *Август. Первый император Рима,* М. 2003, էջ 273-297. **Հ. Ասատուրեան,** *Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հա-*

© National Library of Armenia

քական գիծը շարունակուեց նաեւ նրան յաջորդած Յուլիոս-Կլաւդիոսների (Ք.յ. 14-68 թթ.) հարստութեան հիմնադիր Տիբերիոս կայսեր գահակալութեան տարիներին, սակայն նրա գահակալութեան ամենավերջում Արեւելքում տեղի ունեցան տարածքային նոր վերափոխումներ: Նոր գահ բարձրացած Կալիգուլա կայսրը վերականգնեց Կոմմագենէի թագաւորութիւնը, որտեղ թագաւոր ճանաչուեց Անտիոքոս III-ի որդին՝ Անտիոքոս IV-ը կամ Կոմմագենացին: Նոյնպիսի կարգավիճակ տրուեց նաեւ Փոքր Հայքին, որտեղ սկսեց իշխել Պոնտոսի Պոլեմոն թագաւորի թոռը՝ Կոտիսը, որը Պոլեմոնի աղջկայ՝ Անտոնիա Տրիփոնայի եւ Թրակիայի Կոտիս թագաւորի որդին էր: Այս երկու վերականգնուած թագաւորութիւններն էլ գոյութիւն ունեցան մինչեւ 72 թուականը: Ծագում է միայն մէկ բնական հարց. ի՞նչ նպատակ էր հետապնդում կայսրը, երբ այսպիսի բարեհաճ վերաբերմունք էր տածում մինչ այդ արդէն պետականութիւնը կորցրած այս երկու երկրների հանդէպ: Կալիգուլան ունէր, մեր կարծիքով, բաւականին խորամանկ եւ հեռուն տանող պլաններ: Հռոմն արդէն մէկ դարից աւելի էր, որ ապարդիւն պայքարում էր Արեւելքում իր տիրապետութիւնը հաստատելու համար, բայց կարողացել էր վերջնականապէս ամրապնդուել միայն Բալկաններում, իսկ որոշ վերապահումներով նաեւ՝ Փոքր Ասիայում: Արեւմուտքում Հռոմի ընդարձակման համար չկար այլեւս եւ ոչ մի «կենսական» տարածք, քանզի նրանց գերիշխանութեան ներքոյ էին մինչեւ Իբերիա ընկած բոլոր հողերը, այս պատճառով էլ արտաքին քաղաքականութեան ծանրութեան կենտրոնը ամբողջովին տեղափոխուել էր Արեւելք: Սակայն այս տարածաշրջանում, չնայած նրանց իրականացրած բոլոր միջոցառումներին, գործերը չէին դասաւորւում ակնկալիքներին եւ գործադրած ջանքերին համապատասխան: Ուստի անհրաժեշտ էր կրկին անգամ վերանայել իրականացուող արեւելեան քաղաքականութիւնը: Հռոմին այստեղ յատկապէս դիմակայում էին ինչպէս Հայաստանը, որտեղ մինչեւ դարի կէսերը կառավարում էին օտարազգի դրածոյ թագաւորները, այնպէս էլ Պարթեւստանը: Այս խնդրին լիովին այլ մեկնաբանում է տալիս Յ. Մանանդեանը, երբ գրում է. «Կիսաֆէոդալական Կապադովկիայի եւ Կոմմագենէի՝ հռոմէական նահանգների վերածուելը, հաւանօրէն, մեծ դժգոհութիւն էր առաջ բերել տեղական արտօնեալ ազնուականութեան մէջ, եւ կարելի է ենթադրել, որ Արտաւան Գ-ն, 36 թուին Կապադովկիա արշաւելուց առաջ, ոտքի էր հանել ու ապստամբեցրել այդ երկրները, որոնց մէջ ուժեղ էր իրանական տարրը: Եւ գուցէ հէնց այդ խռովութիւններն էին եղել գլխաւոր պատճառը Կալիգուլայի նոր քաղաքականութեան: Առանձնապէս ուշադրաւ է այն, որ Կլաւդիոսը եւս, Կալիգուլայի յաջորդը, որը հետեւում էր Օգոստոսի եւ Տիբերիոսի քաղաքականութեանը՝ հարկ չհամարեց միացնել Կոմմագենէն եւ Փոքր Հայքը Հռոմէական կայսրութեանը, եւ այդ երկրները նաեւ նրա իշխանութեան ժամանակ մնացին իբրեւ առանձին թագաւորութիւններ»:[2] Ասուածին պէտք է յաւելել, որ նրանք իրականում Հռոմէական կայսրութեանը ենթակայ եւ կախեալ երկրներ էին: Փաստօրէն, կայսրութեանը կրկին անհրաժեշտ էր դիմել ժամանակաւոր դադարի քաղաքականութեանը, մինչ լիակատար կ'ամրապնդուէին նրա դիրքերն Արեւելքում, մասնաւորաբար՝ Փոքր Ասիայում, քանզի այն, կարելի է ասել, որ դեռ միայն նուաճուել էր, բայց ոչ՝ «մարսուել»: Չնայած այն հանգամանքին, որ Կալիգուլային պատմիչները ներկայացնում են միայն բացասական երանգներով[3], հաշուի առնելով նրա անձնական կեանքը եւ վարքը, այսուհանդերձ, ուսումնասիրողների մօտ նա ստացել է միայն հակադարձ գնահատականը՝ ներկայացուելով որպէս խոհեմ եւ զուսպ պետական գործիչ: Նա, փաստօրէն, վերադարձ էր կատարում Ք.ա. II դ.՝ մեծ նուաճումների ժամանակաշրջանի հանրապետական գործիչների վարած արեւելեան քաղաքականութեանը, երբ նրանք առաջնորդւում էին կրտսեր դաշնակիցներին ապաւինելու սկզբունքին, որոնք էլ աջակցում էին Հռոմին ուժեղների դէմ գոյամարտում՝ չնայած այն հանգամանքին, որ Փոքր Ասիայի մեծագոյն մասը արդէն Հռոմի ենթակայութեան ներքոյ էր: Եթէ Ք.ա. II դարում այդ քաղաքականութիւնն իրեն արդարացրել էր, ապա Գնէոս Պոմպէոսի՝ Արեւելքում յայտնուելուց յետոյ, կարելի է առանց երկմտելու ասել, որ այդ հինը լիովին մոռացուեց: Պոմպէոսը ապաւինեց ոչ թէ կրտսեր դաշնակիցներին, այլ կարգաւորեց յարաբերութիւնները ուժեղներից մէկի՝ Տիգրան Մեծի հետ: Այս պատճառով էլ, ինչպէս նշուեց վերեւում, նա հիմնականում անձեռնմխելի թողեց Մեծ Հայքի տարածքը, եթէ նկատի չունենանք Ծոփքի արեւմտեան հատուածի ժամանակաւոր միացումը Կապադովկիային: Սակայն Տիգրանին իր դէմ չտրամադրելու նպատակով նա վերջինիս, որպէս փոխհատուցում, յանձնեց Ճորոխի աւազանի մի մասը, ինչպէս նաեւ՝ մի փոքրիկ հատուած Հիւսիսային Միջագետքից, այդ թւում նաեւ՝ Արուաստանը[4]:

Կալիգուլան, ինչպէս նշեցինք վերեւում, 37 թ. տարածքներ նուիրեց նաեւ Փոքր Հայքին եւ Կոմմագենին, բայց, իր կամքից անկախ, շահողի կարգավիճակում յայտնուեց նաեւ Հայաստանի հիւսիսային հարեւանը՝ Վրաստանը, որն ստացաւ Սամցխէն եւ նրան յարակից շրջանները: Այս տարածքները նախապէս գտնուել էին Երուանդունիների պետութեան կազմում եւ հետագայում նուաճուել էին վրացիների կողմից, բայց Արտաշէս I-ը ազատագրել էր դրանք, երբ վերականգնեց Մեծ Հայքի թագաւորութեան տարածքային ամբողջականութիւնը: Այժմ կրկին, արդէն կռուախնձոր դարձած այդ նոյն տարածքները կայսրութեան միջամտութեամբ տրւում էին Վիրքին, որի սահմանները տարածուելու էին մինչեւ Սեւ ծովի ափերը: Հարցն այն էր, որ հայերի համար բաւականին ծանր եւ դժուարին գործ էր իրենց ենթակայութեան տակ պահել Շաւշեթի եւ Ուլգարի լեռներից հիւսիս ընկած տարածքները, քանզի դա պահանջում էր մեծաքանակ ուժերի կենտրոնացում այդ շրջանում: Այս կապակցութեամբ Բ. Յ. Յարութիւնեանը նշում է. «Եթէ դժուար է ասել, թէ որոշակիօրէն ինչպէս էր անցնում երկու հարեւան երկրների միջեւ սահմանագիծը III դարի 70-ական թուականներին, ապա II դարի սկզբին, համաձայն «Քարթլիս ցխովրեբա»-ի, Մեծ Հայքի կազմում էր Սամցխէ գաւառը Դեմոթ բերդով, իսկ Ն. Բերձենիշուիլու կարծիքով,

---

յաստանի եւ Հռովմայ, 190-էն Ն. Ք. մինչեւ 428 յ. Ք., համառօտ հայոց պատմութիւն այս շրջանիս, Վենետիկ, 1912, էջ 131-146 եւ այլն:

2 **Յ. Մանանդեան,** *Երկեր*, հտ. Ա, էջ 312: Այս հարցում վերջինիս համակարծիք է նաեւ Ս. Տ. Երեմեանը: Մանրամասն տե՛ս **Ս. Տ. Երեմեան,** *Հայաստանը նախնադարեան-համայնական եւ ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում,*- Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. I, Երեւան 1971, էջ 721-722):

3 Տե՛ս **Светоний, Гай Транквилл,** *Жизнь двенадцати цезарей, Калигула*, 13-47, М. 2006; Tac, Ann, I, 1, 32, 41, 69, IV, 71, V, 1, VI, 3, 5, 9, 20, 32, 45, 46, 48, 50, Cambridge, Mass – L, 1956 (Loeb Classical Library): Կալիգուլայի մասին տե՛ս նաեւ **Д. Нони,** *Калигула*, Ростов-на-Дону, 1998, էջ 211-319; **К. Крист,** *История времён римских императоров, от Августа до Константина*, т. I, Ростов-на-Дону, 1997, էջ 272 եւ յաջ.:

4 Տեղի ունեցած տարածքային փոփոխութիւնների կապակցութեամբ մանրամասն տե՛ս **Բ. Յ. Յարութիւնեան,** *Հայաստանի պատմութեան ատլաս*, Ա մաս, Երեւան 2004, էջ 28-29:

© National Library of Armenia

սահմանն էլ անցնում էր այժմեան Դուիրի գիւղի մօտակայքով: Ուստի միանգամայն հաւանական է կարծել, որ Դուիրի գիւղից դէպի արեւմուտք ընկած հողերը՝ մինչեւ Ճորոխի գետաբերանի շրջանը եւ Սեւ ծովի ափերը, մտան հայկական թագաւորութեան կազմի մէջ»[5]: Հեղինակը նաեւ նշում է, որ դէպի Կատարզենէ-Կաղարջք գոնէ մէկ ճանապարհ, եւ ոչ թէ ճանապարհներ չլինելու պատճառով է, որ այդ տարածքը կա՛մ ետ է վերադարձուել, կա՛մ էլ, որ առաւել հաւանական է, Տիգրան Մեծը նուիրել է Պոնտոսի թագաւորութեանը[6]: Վերոյիշեալ երկու լեռներից զատ՝ այստեղ գտնուող եւ ուղղահայեաց ձգուածութիւն ունեցող Արսիանի լեռները եւս առաջ էին բերում մէկ լրացուցիչ դժուարութիւն՝ խանգարելով անխափան կապին, ինչպէս Լազիկէի եւ Սամցխէի միջեւ, այնպէս էլ՝ այս երկուսի եւ Հայաստանի: Այս շրջանում էր գտնուում սահմանային Դեմոթ ամրոցը եւ Դուռն կամ Դուիրի բնակավայրը, որոնցից վերջինը Ս. Տ. Երեմեանը կապում է ներկայիս վրացական Դուիրի գիւղի անուան հետ[7]: Այս տարածքի մանրամասն նկարագրին մենք հանդիպում ենք Պտղոմէոսի մօտ, որը նշում է. «Հայքի՝ Եփրատ, Կիւրոս եւ Արաքս գետերի միջեւ ընկած հատուածի գաւառներն են՝ Մոսքական լեռների մօտ՝ Կատարզենէ, Բոքաս կոչեցեալներից վերեւ՝ Կիւրոս գետի մօտ, Տոսարենէ եւ Օտենէ, Արաքս գետի մօտ՝ Կոլթենէ, իսկ նրանից ներքեւ՝ Սոդուկենէ, Պարիւադրէս լեռան մօտ՝ Սիրակենէ, Սակապենէ: Այդ հատուածի քաղաքներն են. Սալա՝ 73° 30′, 44° 20′, Ասկուրա՝ 74°, 44° 10′, Բարազա՝ 75° 20′, 44° 10′, Լալա՝ 16° 10′, 44°, Սանտուտա՝ 76° 20′, 44° 20′, Սատափարա՝ 78° 44′, 20′, Տոգա (կամ Օտա)՝ 78° 50′, 44′, Վարուրա (կամ Վաթուրա)՝ 73°, 43°, Ազատա՝ 72° 15′, 43° 15′»[8]: Այստեղ նշուած Ասկուրա բնակավայրը հէնց նոյն Դեմոթն է կամ Դուռնը[9], որի մասին Պտղոմէոսը խօսում է նաեւ Ասիայի երրորդ քարտէզի այն հատուածում, ուր անդրադառնում է Իբերիային կամ Վիրքին: Նախ ուրուագծելով նրա սահմանները՝ պատմիչն, իր բնաւորութեանը համապատասխան, սկսում է թուարկել այդ տարածքի բնակավայրերը՝ քաղաքներն ու գիւղերը, որոնց շարքում է գտնուում նաեւ Սուրա տեղանունը՝ 75°, 45° 20′ տեղադրութեամբ[10]: Սուրան, ինչպէս պարզորոշ երեւում է, հանդիսանում է Ասկուրաի կրճատուած կամ աղճատուած տարբերակը, որտեղ վերջինից սղուել կամ դուրս են մնացել Ա եւ Կ տառերը՝ այսինքն՝ առաջին եւ երրորդ:

Այս տեղանքը համընկնում է ներկայիս Վրաստանի Հանրապետութեան Սուրամիի լեռնաշղթայի եւ այստեղ գտնուող նոյնանուն բնակավայրի հետ, որը հնում յայտնի է եղել Արգուեթի կամ Լիխի լեռնաշղթայ անուամբ[11]:

5 Բ. Ց. Ցարութիւնեան, *Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի*,- ԲԵՀ, 1977, թիւ 2, էջ 179:

6 Տե՛ս նոյն տեղում:

7 Տե՛ս *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. I, էջ 720-721 (հեղ. Ս. Տ. Երեմեան):

8 Claudii Ptolomaci Geographia, ed. C. Müller, Parisi tis, 1901, V,13, § 9-10

9 Մանրամասն տե՛ս Բ. Ց. Ցարութիւնեան, *Հայաստանի պատմութեան ատլաս*, էջ 32, 34, 38-39: *Դուռ* բառի ստուգաբանութիւնը տե՛ս Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Ա, Երեւան 1971, էջ 684-686:

10 Ptol, V, 11, § 1-2: Այստեղ անհրաժեշտ է կատարել միայն մէկ ուշագրաւ լրացում, քանզի § 3-ում նոյն հեղինակը խօսում է նաեւ Սուրյա անունով մէկ այլ բնակավայրի մասին, որի աշխարհագրական կոորդինատները նոյնն են, ինչ որ տեքստում նշուած Սուրայինը՝ 75°, 45° 20′:

11 Տե՛ս Անանիա Ծիրակացի, *Մատենագրութիւն*, թարգ. Ա. Գ. Աբրահամեանի եւ Գ. Բ. Պետրոսեանի, Երեւան 1979, էջ 289. Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի* (փորձ VII դարի հայկական քարտէզի վերակազմութեան ժամանակակից քարտէզագրական հիմքի վրայ), Երեւան 1963, էջ 39, 104. *Очерки истории*

Վրաստանի նկատմամբ ցուցաբերուած այս սիրալիր եւ բարեհաճ վերաբերմունքը չսահմանափակուեց միայն այս տարածքային նուիրատուութիւններով: Կայսրութիւնն համաձայնուեց, որ Պարթեւստանում իշխի Արտաւան III-ը, իսկ վերջինս էլ հարկադրուած էր դիմել զիջումների՝ Մեծ Հայքի գահակալին առնչուող խնդրում, քանզի Հայաստանի թագաւոր ճանաչուեց վրաց Փարսման արքայի եղբայրը՝ Միհրդատը[12]: Փաստօրէն, չունենալով այլ ելք, որպէսզի Պարթեւստանում ամրապնդի իր տիրապետութիւնն ու գերիշխանութիւնը, Արտաւանը հարկադրուած էր դիմելու այս փոխզիջմանը: Տարածքներ զիջելով Հայաստանի հարեւաններին ի հաշիւ վերջինիս ոչ միայն նրա հիւսիսում, այլեւ հարաւում, որի մասին կը խօսենք քիչ անց, Հռոմը, հաւանաբար ձգտում էր աւելի թուլացնել Հայաստանը: Ինչ վերաբերում է հայոց գահը օտար դրածոյին յանձնելուն, ապա, ըստ երեւոյթին, կայսրութիւնը ցանկանում է ապացուցել բոլորին, որ միայն ինքն է ընդունակ ապահովել Արեւելքում կարգ ու կանոն, ինչը կը նպաստի այս տարածքի զարգացմանն ու առաջընթացին՝ առանց աւելորդ ցնցումների եւ բախումների:

Մենք արդէն նշեցինք, որ տարածքային փոփոխութիւններ տեղի ունեցան նաեւ Հայաստանի հարաւային սահմանում: Այս առթիւ Յովսեպոս Փլաւիոսը գրում է. «Այսպիսով, Արտաբանէսը (խօսքը վերաբերում է Արտաւանին - Ց. Յ.) Իզատէսի (Ադիաբենէի թագաւորն էր 35-59 թթ.) օգնութեամբ, նորից հաստատուեց գահին, որից նա նախապէս հեռացուել էր մեծամեծների ձեռքով: Նա երախտամոռ չգտնուեց իր հանդէպ կատարած բարերարութիւնների հանդէպ»[13]: Մի փոքր աւելի ուշ պատմիչը թուարկում է այդ բարերարութիւնները, որոնց թւում էր նաեւ Իզատէսին. «...մի ընդարձակ երկիր պարգեւելը, այն վերցնելով հայոց թագաւորից: Այդ երկիրը կոչւում է Նիսիբիս, եւ այնտեղ նախկինում մակեդոնացիները կառուցել էին Անտիոք քաղաքը, որը կոչեցին Էպիմիգդոնիա: Այսպիսի պատիւներով Իզատէսը մեծարուեց պարթեւների թագաւորի կողմից»[14]: Այստեղ վճռական նշանակութիւն ունեցաւ ոչ միայն օգնութեան դիմաց փոխհատուցումը, այլեւ այն, որ պարթեւները եւս իրենց կողմից ցանկանում էին ճնշում գործադրել Մեծ Հայքի վրայ: Այսպէս, նա ցանկանում էր ցոյց տալ եւ ապացուցել, որ եթէ Հայաստանը այսուհետեւ չվարի պարթեւամէտ քաղաքականութիւն եւ դէմքով շրջուի դէպի Հռոմը, ապա իրենք եւս կարող են դիմել կանխարգելիչ, նախազգուշական միջոցների: Ինչ վերաբերում է Հռոմին, ապա վերջինս եւ ոչ մի կերպ չարձագանգեց այս տարածքային փոփոխութեանը:

Էպիմիգդոնիան նոյն Մծբինն էր, որը գտնուում էր Հայոց Միջագետքում եւ, ինչպէս վկայում է Փաւստոս Բուզանդը, Դ դարի մեր արքաներից Պապը՝ կրկին առաջ է քաշել այդ տարածքների հարցը, որպէսզի դրանք վերադարձուեն օրինական տիրոջը՝ Հայաստանին[15]: Իրականում անհաւանական է, որ Պապը այսպիսի յանդուգն

Грузии, т. II, Грузия в IV-X веках, под ред. М. Д. Лордкипанидзе, Д. Л. Мусхелишвили, Тбилиси, 1988, էջ 87, 335, 391:

12 Տե՛ս *Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, հ. 9, *Հին յունական աղբիւրներ*, Ա, *Յովսեպոս Փլաւիոս, Դիոն Կասսիոս*, թարգ. Ս. Մ. Կրկեաշարեանի, Երեւան 1976. Դիոն Կասսիոս, LIX, 27, Յովսեպոս Փլաւիոս, *Հրէական հնախօսութիւն*, XVIII, 4, 5, Светоний, Калигула, XIV:

13 Յովսեպոս Փլաւիոս, XX, 66:

14 Յովսեպոս Փլաւիոս, XX, 67: Այս կապակցութեամբ տե՛ս նաեւ Strabo, XVI, I, 23:

15 Տե՛ս Փաւստոսի Բուզանդացւոյ *Պատմութիւն Հայոց*, ի լոյս ած Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1883, Է, լբ:

© National Library of Armenia

պահանջ ներկայացնէր հռոմէացիներին, ուստի սա, ամենայն հաւանականութեամբ, ժողովրդական մտածողութեան էպիկական արտացոլման արտայայտումներից կամ դրսեւորումներից մէկն էր, որն էլ ի վերջոյ «տեղ» է գտել Փաւստոսի շարադրանքում: Այս տարածքներն անցան Ադիաբենին, իսկ հետագայում՝ այստեղ գոյութիւն ունեցած յաջորդ պետութիւններին: Հայաստանի հարաւային սահմաններն այս շրջանում, այն է՝ Աղձնիք նահանգի հարաւում, նախապէս հասնում էին մինչեւ Արեւմտեան Տիգրիսի ափերը, բայց չէին ընդգրկում նրա հովիտն ամբողջութեամբ՝ ձգուելով Հայկական Տաւրոսի հարաւային լանջերին ոչ թէ համարեա զուգահեռ, ինչպէս եղաւ հետագայում, այլ մինչեւ Մասիոս լեռները: Փաստօրէն, Հայաստանի կազմում էր նաեւ Միջագետք Հայոցը: Այս տարածքներն Իզատէսին զիջելով՝ դրանք հետագայում այլեւս երբեք չվերամիաւորուեցին Հայաստանին: Որ իսկապէս Մասիոսի շրջանը պատկանել է Հայաստանին, սկսած ամենաուշը Երուանդունիների ժամանակներից, որոնց պետականութեան վերաբերեալ, իրաւացիօրէն վկայում է նաեւ Ստրաբոնը: Խօսելով ձմռան ամիսներին Կովկասի անանցանելիութեան մասին եւ, թէ ինչպէս կարելի է այն յաղթահարել՝ նա գրում է. «...ինչպէս անում են Ատրպատականեան Մարաստանում եւ Մասիոս լեռան վրայ՝ Հայաստանում»[16]: Իր հետագայ շարադրանքում նա նաեւ յիշատակում է Մասիոսի տարածքում գտնուող (էպի) Միգդոնիա քաղաքը: Ἐπι-Μυγδονία քաղաքի անուանումն ունի հետեւեալ ստուգաբանութիւնը. ἐπί նախդիր է եւ հին յունարէնում ունի բազմաթիւ իմաստներ, որոնք բոլորն անհնար է թուարկել, բայց բերելով ընդհանուր յայտարարի, կարելի է ասել, որ ունի վրայ, գէր, մերձ, հետ իմաստները (ռուսերէն на, над)[17]: Այս ամէնը ստեղծում է այն տպաւորութիւնը, որ էպիմիգդոնիան կառուցուել է Միգդոնիայի հարեւանութեամբ՝ նրանից հիւսիս եւ կամ էլ, ի տարբերութիւն առաջինի, նրանից աւելի բարձրադիր վայրում, իսկ ծայրայեղ դէպքում եղել է Միգդոնիայի արուարձանը:

Ինչ վերաբերում է Աղձնիքի եւ Կորճայքի հատման տեղանքից հարաւ ընկած տարածքներին, որ առաւել յայտնի են նաեւ Ծաւդէք անուամբ, եւ որը չպէտք է շփոթել Արցախի Ծաւդէքի հետ: Վերջինիս մասին յիշատակում է Պտղոմէոսը՝ այն անուանելով Սոդուկենէ[18]: Ս. Տ. Երեմեանի կարծիքով հարաւային Ծաւդէքի տարածքի պատկանելութեան հարցը միջազգային դիւանագիտութեան խնդիր է դարձել դեռ մեր կողմից վերեւում յիշատակուած 37 թ. պայմանագրի ստորագրման օրերին: Ըստ նրա՝ այդ պայմանագրով Ծաւդէքը, Հայոց Միջագետքը եւ Արուաստանը, որոնք միասին կազմել են շուրջ 18 հազ. քառ. կմ տարածք, տրուել են Իզատէսին[19]: Ս. Տ. Երեմեանի այս տեսակէտը հերքուել է պատմաբան աշխարհագրագէտ Բ. Յ. Յարութիւնեանի կողմից: Վերջինս, մատնացոյց անելով Պտղոմէոսի վկայութիւններից մէկը, որը մեծապէս լրացնում է արդէն վերեւում մեր կողմից օգտագործուած Յովսեպոս Փլաւիոսի վկայութեանը, յանգում է լիովին հակառակ տեսակէտի: Իսկ Պտղոմէոսն այդ առթիւ գրում է. «Այսպիսով նա (խօսքը վերաբերում է Մեծ Հայքին - Յ. Յ.) իր սահմանները տարածում էր ընդհուպ մինչեւ Ադիաբենէն: Այս կողմից

16 The Geograhpy of Strabo, L. 1960, XI, V, 6.

17 Տե՛ս **И. Х. Дворецкий**, *Древнегреческо-русский словарь*, т. I, М. 1958, էջ 598-600, *Словарь иностранных слов*, под ред. А. Г. Спиркина, М. 1987, էջ 584:

18 Տե՛ս Ptol, V, 13, § 9:

19 Տե՛ս *Հայ ժողովրդի պատմութիւն*, հ. I, էջ 719. **Ս. Տ. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 40, 71, 86:

շրջափակուած լինելով լեռներով՝ նա լայնութեամբ տարածւում էր ձախից, Արաքսի վրայով՝ մինչեւ Կիւրոս գետը»[20]: Այստեղից ամէն ինչ առաւել քան պարզ է, քանզի պատմիչ աշխարհագրագէտը նկատի ունի Տիգրիսի ձախ եւ աջ ափերը միասին վերցրած: Սրանցից առաջինը, փաստօրէն, դարձել էր սահմանագիծ Մեծ Հայքի եւ Ադիաբենէի միջեւ: Այսպիսով, եթէ մինչեւ Ք.յ. Ա դարի սկիզբը Մծբինը նոյնպէս, իրեն յարակից շրջաններով, հանդիսանում էր Մեծ Հայքի անբաժանելի մասերից մէկը, ապա, այդուհետեւ այն նախ ընդգրկուեց Ադիաբենէի, իսկ աւելի ուշ՝ Պարթեւական թագաւորութեան կազմի մէջ: Բ. Յ. Յարութիւնեանը նշում է. «Այլ խօսքով, Տիգրիսը սահման է հանդիսացել Մեծ Հայքի եւ Միջագետքի միջեւ այն մասում, որտեղ Եփրատը թեքւում է դէպի արեւմուտք: Եղած տարբերութիւնների լոյսով բնաւ էլ չի երեւում, որ Ծաւդէքը մաս է կազմել Միգդոնիա-Արուաստանի: Այն 37 թ. յետոյ էլ շարունակել է մնալ Մեծ Հայքի կազմում՝ մաս կազմելով Կորդուք-Գորդիւենէ աշխարհ-զօրավարութեան»[21]: Ծաւդէքի պատկանելութեան հարցը՝ կրկին հրապարակ հանուեց նախ 298 թ. Մծբինի, իսկ ապա 363 թ. պարսկա-հռոմէական «ամօթալի» հաշտութեան պայմանագրերի ստորագրման օրերին:

Հայոց Միջագետքի հայկականութեան վերաբերեալ ուշագրաւ վկայութիւն է հաղորդում նաեւ Մովսէս Խորենացին, երբ գրում է. «Բայց թիկունս առնելով Երուանդայ զհռոմայեցիս՝ ոչ ինչ վտանգի ի թագաւորութեանն Վեսպանիու եւ Տիտոսի, թողլով ի նոսա զՄիջագետս: Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց ի Միջագետաց, եւ հարկս եւս առաւելագոյնս տայր ի Հայոց Երուանդ: Իսկ գործակալացն Հռովմայեցւոց մեծապէս հանդերձեալ զքաղաքն Եդեսիայ՝ ի նմա հաստատեն զտունս գանձուց հարկացն ժողովելոց ի Հայոց, ի Միջագետաց եւ յԱսորեստանեայց: Եւ ժողովեն ի նմա զամենայն դիւանս, եւ կարգեն դպրոցս երկուս, մի՝ զբուսն իւրեանց զԱսորին, եւ միւս եւս զՅոյնն, եւ զդիւանն հարկաց եւ զմեհենականն, որ կայր ի Սինոպ Պոնտացւոց՝ անդր փոխեն»[22]: Խորենացու այս վկայութիւնն, ունենալով ժամանակագրական անճշտութիւններ, այսուհանդերձ, չափազանց ուշագրաւ եւ հետաքրքիր է, կարօտ առանձնայատուկ մեկնաբանութեան: Եթէ իրար ենք միացնում 37 թ. պայմանագիրը եւ, ապա Վեսպասիանոսի (69-79 թթ.) ու նրան յաջորդած Տիտոսի (79-81 թթ.) կառավարումները, ապա 37 թ. մինչեւ 69-ը, իրարից բաժանում է ընդամէնը 32 տարի, որ Խորենացու դէպքում, կարելի է համարել հանդուրժելի, քանզի Պատմահօր երկասիրութիւնն ընդգրկում է անյիշելի ժամանակներից մինչեւ Ք.յ. 428 թ. ընկած ժամանակշրջանը: Այսպիսի երկարաձիգ ժամանակագրութեան դէպքում, սխալն առաւել քան հաւանական է: Եթէ պէտք է պարզաբանել, թէ ինչ կապ այստեղ ունի Երուանդը, ապա կարելի է կատարել միայն ենթադրութիւններ: Մեր կարծիքով, այստեղ իրար են միացուած, միահիւսուած պատմական երկու իրադարձութիւններ: Դրանցից առաջինը վերաբերում է Երուանդ Դ Վերջինին, իսկ միւսը՝ 37 թ. տեղի ունեցած իրադարձութիւններին: Երուանդը, հաւանաբար, Սելեւկեանների ռազմատենչ եւ նուաճողական ցանկութիւնները զսպելու նպատակով, նրանց է զիջել Հայոց Միջագետքը, որը եւ էլ աւելի

20 Ptol, VI, 9, § 26.

21 **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*, մաս Ա, (Արեւմտեան եւ հարաւային աշխարհներ), Երեւան 2001, էջ 298:

22 **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, քնն. բնագիրը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրաց. Ա. Բ. Սարգսեանի, Երեւան 1991, Բ, լը:

© National Library of Armenia

է լցրել ժողովրդի համբերութեան բաժակը: Չի կարելի բացառել, որ դա նաեւ դիւանագիտական քայլ էր նրա կողմից, որպէսզի կարգաւորէր յարաբերութիւնները Սելեւկեանների հետ, ինչպէս նաեւ ստանար նրանց մօտ գտնուող մանկահասակ Արտաշէսին[23]: Նա, կարծես թէ, կանխազգում էր, որ վաղ թէ ուշ՝ Արտաշէսից իրեն վտանգ է սպառնալու, ուստի, հաւանաբար, ցանկութիւն ունէր նրանից ազատուել Ֆիզիկապէս: Փաստօրէն, Պատմահայրն իրար է միացնում պատմական մի քանի իրադարձութիւններ, որոնք կատարուել են Երուանդ Վերջինի ժամանակներից սկսած մինչեւ Վեսպասիանոս եւ Տիտոս կայսրերի կառավարման տարիները: Ինչպիսի մեկնաբանութիւններ էլ տանք այս դէպքերին, այսուհանդերձ, դրանց հիմքում ընկած են նաեւ Ք.յ. 37 թ. համաձայնագրի հետ առնչուող դէպքերը, որով Մեծ Հայքը տարածքային անդառնալի կորուստներ է ունեցել նաեւ իր հարաւարեւմտեան սահմանագլխին:

37 թ. պայմանագրով Հայաստանից ապօրինաբար վերցուեցին ոչ միայն տարածքներ, այլեւ երկրի թագաւոր ճանաչուեց կայսրութեան դրածոն, օտարազգի Միհրդատ Փառնաւազեանը: Նոյնիսկ 69-66 թթ. հայ-հռոմէական պատերազմից յետոյ, այս երկու երկրների միջեւ յարաբերութիւններն այդչափ լարուած եւ սրուած չէին, ինչպէս այժմ, քանզի կայսրութեան հակահայկական քաղաքականութիւնը ունէր խիստ ընդգծուած բնոյթ: Այս մասին, այդ թւում եւ՝ տարածքային որոշ փոխհատուցումների, մենք արդէն նշեցինք վերեւում:

Իրադրութիւնն արեւելքում կրկին թէժացաւ եւ լարուեց, չնայած մինչ այդ եւս բաւականին բարդ եւ հակասական էր, երբ 41 թ. սպանուեց Կալիգուլան, եւ կայսր հռչակուեց Կլաւդիոսը (41-54 թթ.): Փաստօրէն, Հռոմը կարողացաւ միայն ժամանակաւորապէս հասնել յաջողութեան, քանզի ի վերջոյ Մեծ Հայքում հաստատուեցին պարթեւ Արշակունիները:

23 Նոյն տեղում, Բ, լէ-լը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՁՆԵՑԻ. ՍԱԿՍ ԺՈՂՈՎՈՑՆ, ՈՐ ԵՂԵՆ Ի ՀԱՅՍ

(Գիտա-քննական բնագիր)

Ալեքսան Յակոբեան

Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսի (717-728 թթ.) «Սակս ժողովոցն, որ եղեն ի Հայս» վերտառութեամբ յայտնի երկը գրուել է Մանազկերտի ժողովից յետոյ, այսինքն՝ 726 թ. յաջորդող երկամեայ ժամանակահատուածում, ինչպէս այդ մասին նշւում է հէնց նրա բնագրի որոշ կտորներում: Հեղինակը սկզբում համառօտ թուարկում է իրենից առաջ Հայաստանում տեղի ունեցած վեց կարեւորագոյն եկեղեցական ժողովները, ապա մանրակրկիտ ներկայացնում ասորի վարդապետների մասնակցութեամբ Ապահունիք գաւառի Մանազկերտ «գիւղում» իր գումարած ժողովում քննարկուած հարցերը եւ դաւանական յարակից խնդիրները:

Երկի առաջին մասում Յովհաննէս Օձնեցու շարադրած նիւթի մեծ մասը աղբիւրագիտական իմաստով եզակի է: Թէպէտ հեղինակի տեղեկատուութիւնից դուրս են մնացել այլ սկզբնաղբիւրներից յայտնի բազմաթիւ ուրիշ կարեւոր ժողովներ (օրինակ՝ Կարինի (շուրջ 530 թ.), Դուինի (607 եւ 645 թթ.) եւ այլն), սակայն, միւս կողմից, ըստ էութեան, միայն նրան ենք պարտական Հայաստանում Գրիգոր Լուսաւորչի կողմից Նիկիայի տիեզերական ժողովից յետոյ, այդպէս նաեւ՝ Ներսէս Մեծի կողմից Կոստանդնուպոլսի, իսկ Սահակ Պարթեւի ու Մաշտոցի կողմից՝ Եփեսոսի տիեզերական ժողովներից յետոյ ազգային ժողովների գումարման վերաբերեալ եզակի հաղորդումների համար:

Ի դէպ, նշուած ժողովներից առաջինի թուագրումը՝ Նիկիայի տիեզերական ժողովից (325 թ.) յետոյ եւ Լուսաւորչի քահանայապետութեան «ի» (քսաներորդ) տարում (այդպիսի թուագրում է տալիս նաեւ հայ քաղկեդոնական պատմական աւանդոյթը ենթադրաբար Ը դարում ամփոփած «Նարրացիո»-ն), միայն առաջին հայեացքից է թւում հաւաստիութիւնից հեռու (325/6-20=305/6): Եթէ ենթադրենք, որ «ի» ընթերցումը կարող էր առաջ գալ գրչական մի բաւական տարածուած սխալ վերծանութեան արդիւնքում՝ նախնական «Բժ» (=երկոտասան) թուից, ապա դժուար թէ հնարաւոր լինի պատահական համարել այս վերականգնուած թուականի ճշգրիտ համապատասխանութիւնը Կեսարիայում Գրիգոր Լուսաւորչի եպիսկոպոսական ձեռնադրման ժամանակին (325/6-12=314): Դա, ըստ Հ. Պողոս Անանեանի վերջնական ճշգրտման, տեղի է ունեցել Լուսաւորչի քահանայանալուց (Վիրապից դուրս գալուց յետոյ՝ 311/312) մօտաւորապէս երկու տարի անց՝ 314 թ. աշնանը: Իսկ սա յուշում է Յովհաննէս Օձնեցու ձեռքի տակ գրաւոր սկզբնաղբիւրի (գուցէ անգամ՝ ժողովական փաստաթղթի) եղած լինելու ենթադրութիւնը, որը հնարաւոր է տարածել նաեւ յաջորդ՝ 381 եւ 431 թթ. յետոյ տեղի ունեցած երկրորդ եւ երրորդ ժողովների վերաբերեալ հաղորդումների վրայ:

Շահապիվանի (444 թ.) եւ «Քաղաքուդաշտի» (506 թ.) ժողովների յիշատակութիւնից յետոյ հեղինակը բաւականին մանրամասն ներկայացնում է վեցերորդ՝ Դուինում 554 թ. Ներսէս Բագրեւանդացու գումարած ժողովը (որի ընդունած փաստաթղթերը պահպանուել են «Գիրք թղթոց»-ում եւ «Կանոնագիրք Հայոց»-ի մեծ խմբագրութեան տարբերակներում), ինչպէս նաեւ հանգամանալից փնովում 632

© National Library of Armenia